ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՇԽԱՐՀ

ՍԻՐԻԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻ

Սիրիական եկեղեցին սկիզբ է առնում Անտիոքի վաղ քրիստոնեական համայնքից, որը հիշատակված է Գործք Առաքելոցում: Անտիոքյան եկեղեցին վաղ դարերի քրիստոնեական մեծագույն կենտրոններից մեկն էր: Սակայն 451 թվականի Քաղկեդոնի ժողովը համայնքում պառակտում առաջ բերեց: Ժողովի ուսմունքը բյուզանդական կայսրության իշխանավորների կողմից պարտադրվում էր քաղաքներում, միչդեռ երկրի գավառական մասում այն համատարած մերժվում էր:

6–րդ դարում Եդեսիայի եպիսկոպոս Հակոբ Բարադային մեծ թվով եպիսկոպոսներ և քահանաներ ձեռնադրեց՝ ի դեմս կայսերական ընդդիմության Քաղկեդոնը մերժածների հոգևոր կարիքները հոգալու համար: Այստեղից այս եկեղեցին հայտնի դարձավ «Հակոբիկյան» անվամբ, իր սեփական («Արևմտյան Սիրիական» կամ «Անտիոքյան» կոչվող) ծիսակարգով և այլ ավանդություններով, որոնք կատարվում էին բոլորի կողմից գործածվող սիրիական խոսակցական լեզվով: Որոշ համայնքներ հիմնվեցին նաև Բյուզանդական կայսրությունից դուրս՝ Պարսկաստանում:

Տարածաշրջանի գրավումը նախ պարսիկների, ապա քիչ ուշ՝ արաբների կողմից դադարեցրեց բյուզանդական հալածանքը և Սիրիական եկեղեցու զարգացման համար ստեղծեց բարենպաստ պայմաններ: Միջին դարերում սիրիական ուղղափառ գիտական միտքը մեծ վերածնունդ ապրեց, երբ համայնքներն ունեին աստվածաբանության, փիլիսոփայության, պատմության և այլ գիտությունների բարգավաճող կրթօջախներ: Զարգացման իր գագաթնակետին գտնվելու ժամանակ Եկեղեցին ներառում էր 20 միտրոպոլիտական Աթոռներ և 103 թեմեր, որոնք հասնում էին ընդհուպ մինչև Աֆղանստան: Սկսհայտորեն այս ժամանակաշրջանում հեռավոր Թուրքմենիայում և Սինկիանգում գոյություն են ունեցել նաև առանց եպիսկոպոսի առաջնորդվող սիրիական ուղղափառ հավատացյալների համայնքներ:

Սակայն 14–րդ դարի վերջերին Լենկ-Թեմուրի գլխավորությամբ մոնղոլների ներխուժումների ընթացքում սիրիական եկեղեցիների և վանքերի մեծամասնությունը ավերվեց՝ սկզբնավորելով երկարատև անկումը: Սարսափելի վնասներ հասցվեցին նաև Առաջին Աշխարհամարտի ժամանակ և դրանից հետո՝ արևելյան Թուրքիայում իրականացվող հալածանքների և ջարդերի պատճառով: Սա պատճառ դարձավ համայնքի սփռվելուն:

Նույնիսկ այսօր սիրիական ուղղափառ բնակչության թիվը փոփոխական է: 1950 և 1960-ականներին շատերը Իրաքից և Սիրիայից գաղթեցին Լիբանան: Իրաքի ներսում նրանք հյուսիսային Մոսուլ քաղաքից շարժվեցին դեպի

Բաղդադ: Համայնքն ամենազգալի կորուստներն ունեցավ Թուրքիայի հարավ-արևելքում, որտեղ մնացին թվով շատ քիչ ուղղափառ սիրիացիներ: Այս դարասկզբին ուղղափառ շատ սիրիացիներ տնտեսական և քաղաքական շարժառիթներով գաղթեցին Արևմտյան Եվրոպա և Ամերիկյան մայրցամաք:

Սիրիացիներն ունեն ուժեղ վանական ավանդություն, սակայն միայն մի քանի վանքեր են պահպանվել հարավարևելյան Թուրքիայում և Միջին Արևելքի այլ վայրերում: Մեկ այլ վանք վերջերս բացվել է Նիդեռլանդներում, որն իր տեսակի մեջ Սփյուռքում միակն է:

Սիրիայի պատրիարքները մինչև 1034 թվականը նստում էին Անտիոքում: Այդ ժամանակից ի վեր նրանք նստել են Մար Բարսումա վանքում (1034-1293), Դերեզ-Զաֆառան վանքում (1293-1924), Հոմսում (Սիրիա, 1924-1959) և վերջապես Դամասկոսում (սկսած 1959 թ.):

Որոշ աստվածաբանական կրթություն տակավին մատուցվում է վանքերի կողմից: Բայց Սբ. Եփրեմ սիրիական ուղղափառ ճեմարանը Պատրիարքության գլխավոր աստվածաբանական հաստատությունն է: Այն հիմնվել է 1939 թ. Մոսուլում, Իրաք, ապա 1960-ականներին փոխադրվել Լիբանան: 1968 թ. նոր հարմարություններ ստեղծվեցին Բեյրութին մոտ գտնվող Ատչանեի կոչվող վայրում, սակայն Լիբանանում բռնկված քաղաքացիական պատերազմը ուսանողներին ստիպեց տեղափոխվել Դամասկոս, Սիրիա: Սբ. Եփրեմ ճեմարանի համար նոր մասնաճյուղեր կառուցվեցին Դամասկոսին մոտ գտնվող Սայեդնիյայում: Սրանց բացումը տեղի ունեցավ 1995 թ. աշնանը:

17-րդ դարի կեսերից սկսած Սիրիայի Պատրիարքությունը ներառնում էր Հնդկաստանի ինքնավար եկեղեցին, որի մի մասն այսօր կոչվում է «Մալանկարա Սիրիական Ուղղափառ եկեղեցի» և ղեկավարվում Կաթողիկոս Մար Բասելիոս Պաուլոս II-ի (ծնված 1915 թ., ընտրված 1975 թ.) կողմից:

ԱՄՆ-ի և Կանադայի սիրիական ուղղափառ թեմերը 1957 թվականին հիմնվել են արքեպիսկոպոս Մար Աթանասիուս Եշուե Սամուելի կողմից: Նա վախճանվեց 1995 թ. ապրիլի 16-ին, և նրա հաջորդը նշանակվեց իր թողած գրության համաձայն: Թեմը ներառնում է 18 պաշտոնական ծխեր և առաքելություն իրականացնող 4 միաբանություններ, որտեղ պաշտոնավարում են 17 քահանաներ և թոշակի անցած 6 հովիվներ: 1993 թվականին Սիրիայի Պատրիարքը հնդիկ հավատացյալների համայնքները բաժանեց սիրիական թեմից և միտրոպոլիտ Մար Նիկոլովոս Զաքարիայի հովվական առաջնորդության ներքո Հյուսիսային Ամերիկայում ստեղծեց Սիրիական Ուղղափառ եկեղեցու Մալանկարա թեմը: Այն ներառում է 23 ծխեր, որտեղ ծառայում են 25 հոգևորականներ: Արքեպիսկոպոս Մար Տիմոթեոս Ափռեմ Աբոդին պատրիարքական փոխանորդն է Ավստրալիայի, որտեղ կան վեց եկեղեցիներ:

Ronald G. Roberson-ի «The Eastern Christian Churches» հայերենի թարգմանեց
ԲԱԲԿԵՆ ՍՐԿ. ՆԱՆՅԱՆԸ